

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիր

Փոքր դրամաշնորհների հայտի ձև

Ծրագրի անվանումը	«Մատչելի կրթություն՝ առանց կոռուպցիոն ռիսկերի ու տարբերակված մոտեցման»
Դիմող կազմակերպության անվանումը	«Օրենքը՝ հանուն իրավունքի գերակայության» հասարակական կազմակերպություն (այսուհետ նաև՝ ՕՀԻԳ)
Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ	Հրայր Հունանի Խաչատրյան հեռ. (094) 50 20 86, Էլ.փոստ- iravunq.orenq.2016@gmail.com , hrayr.khachatryan.1981@mail.ru
Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)	ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան
Ծրագրի տևողությունը	01.10.2016թ.-01.12.2016թ., այսինքն՝ 2 (երկու) ամիս
Ծրագրի հակիրճ նկարագիրը	Ծրագրի շրջանակներում պետք է վերհանվեն համայնքային ենթակայության կրթական հաստատություններում առկա կոռուպցիոն ռիսկերը, խտրական վերաբերմունքը, համակարգի բացերը, ինչպես նաև դրանց նպաստող գործոնները՝ ապահովելով ծրագրի լուսաբանումը: Նախատեսվում է ձևավորել մոնիթորինգային հարցազրուցավարների խումբ և իրականացնել մշտադիտարկում: Արդյունքում կկազմվի զեկույց, առաջարկությունների փաթեթ և կներկայացվի պատկան մարմիններին՝ հետագա ընթացքին հետևելու միտումով:
ԻՀԱ-ից պահանջվող Գումարի չափը	547 740 (հինգ հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:
Ներդրման գումարի չափը	Գույքի (գրասենյակ, դահլիճ, Էլ.տեխնիկա), կոմունալ ծախսերի, ինտերնետի, այլ գրենականի տեսքով:
Ծրագրի բյուջեն (նշել դրամով)	547 740 (հինգ հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:
Ծրագրի գործընկեր կազմակերպությունը (եթե առկա է)	Ծրագրում գործընկեր կազմակերպություն առկա չէ, սակայն ըստ հայտի՝ ծրագրային թիմի կազմում ընդգրկված են գործընկեր կազմակերպությունների և ԶԼՄ-ի ներկայացուցիչներ (այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոալիցիայի կազմում ընդգրկված և/կամ ԻՀԱ-ի դասընթացներին մասնակցած):

Դիմող կազմակերպության/նների նկարագրություն (առավելագույնը կես էջ)

1. «Օրենքը՝ հանուն իրավունքի գերակայության» հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ ՕՀԻԳ) հիմնադրվել է 2016թ. հունիսի 17-ին և պետական գրանցում ստացել 2016թ. հունիսի 29-ին:

2. Կազմակերպության հեռանկարն է՝ ունենալ ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող երկիր, որտեղ իրավունքից բխող օրենքը համապատասխանում է իրավունքին և յուրաքանչյուրն ունի արժանավայել ապրելու պայմաններ, որպես մարդ և քաղաքացի՝ գնահատված լինելու իրական և իրավական երաշխիքներ:
3. Գործունեության հիմնական ուղղվածությունը. իրավաբանական աջակցություն և շահերի պաշտպանություն, քաղաքացիական հասարակության կարողությունների հզորացում՝ հանուն որոշումների կայացման գործընթացում ակտիվ ներգրավվածության և պետական մարմինների հաշվետվողականության խթանման:
4. Կազմակերպությունը չունի իրականացրած ծրագրեր, սակայն ունի փորձառու (*այդ մասին՝ ինքնակենսագրականներում*) և համախմբված թիմ (*3 հիմնադիր, 5 անդամ*), ակտիվ կամավորներ (*10 հոգի*), նպատակասլացություն, վստահելի գործընկերներ և համագործակցելու կարողություն (*առկա է համագործակցություն՝ ոչ պետական և պետական, այդ թվում՝ ՀՀ-ում գործող քաղաքացիական հասարակական բազմաթիվ կազմակերպությունների հետ*):
5. Կազմակերպության շահառուները տարածաշրջանի բնակչությունն են, սակայն իրավաբանական անվճար օգնություն է տրամադրվում նաև համացանցով՝ facebook-յան հարթակով և էլեկտրոնային հաղորդակցությամբ, այդ կերպ, փաստորեն, ընդլայնելով գործունեության և իրավական օգնության տրամադրման տարածականությունը:

Ծրագրի նկարագրություն (*առավելագույնը երկու էջ*)

Խնդրի համառոտ վերլուծությունը–Մարզերում ևս կրթական համակարգն ու ոլորտն ընդհանրապես զերծ չեն կոռուպցիոն ռիսկերից և կոռուպցիոն դրսևորումներից (*քիչ ավելի մանրամասներ հայտնի են Սյունիքի մարզի վերաբերյալ, սակայն գործընկերների դիտարկումներն ու հայտնի տեղեկատվությունը ամբողջացնում են պատկերը ՀՀ ողջ տարածքի վերաբերյալ նման եզրահանգումը*), ընդ որում, կարելի է նշել, որ կոռուպցիոն դրսևորումներն առավել տարածված են մտածողության, հանդուրժողականության, մայրաքաղաքից ու վերահսկողություն իրականացնող համապետական կենտրոնական մարմիններից հեռու գտնվելու և այլ հանգամանքներով պայմանավորված: Մեր գործունեության ընթացքում կրթության ոլորտին և կրթական համակարգին առնչվող բազմաթիվ ահազանգերով, բողոքներով ու օգնության խնդրանքով դիմել են տարբեր քաղաքացիներ: Խնդիրները վերաբերել են և՛ նախադպրոցական ուսումնական հաստատություններին (այսուհետ նաև՝ ՆՈւՀ), և՛ դպրոցներին, և՛ միջին մասնագիտական ու բարձրագույն ուսումնական հաստատություններին (այսուհետ նաև՝ ԲՈւՀ), և՛ արտադպրոցական կրթական (մշակութային, մարզական և այլ) հաստատություններին (այսուհետ նաև՝ ԱԿՀ): Սակայն հաշվի առնելով ԻՀԱ-ի հայտարարությամբ ծրագրի իրականացման համար նախատեսվող ժամկետային ու նյութական միջոցների չափի սահմանափակումները, մենք սույն ծրագրի համար առանձնացրել ենք համայնքային ենթակայությամբ գործող ՆՈւՀ-երին և ԱԿՀ-ներին (համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ՝ ՀՈԱԿ-ներ, և համայնքային բյուջետային հիմնարկներ՝ ՀԲՀ-ներ) վերաբերող խնդիրներն (*օրինակ՝ փորձը վկայում է, որ համայնքային իշխանության փոփոխության դեպքում անմիջապես իրականացվում է համայնքային ենթակայության կառույցների կադրային հիմնափոխում*) ու դրանք պարզելուն և լուծումներ առաջարկելուն վերաբերող սույն ծրագրային գործողությունները, բնավ, երկրորդական չհամարելով դպրոցներին ու ԲՈւՀ-երին վերաբերող հիմնախնդիրները: Ինչպես հայտնի է, ՆՈւՀ-երում ու ԱԿՀ-ներում ուսուցման և այլ չափորոշիչները հիմնականում սահմանվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության (*ու նաև այլ նախարարությունների, օրինակ՝ մշակույթի, առողջապահության, սպորտի և երիտասարդության հարցերի և այլն*) կողմից: Միաժամանակ,

հաշվի է առնվում նաև այն, որ ծրագրի իրականացման ժամանակաընթացքը համընկնում է Կապանում կայանալիք ՏԻՄ ընտրությունների ժամանակին, հետևաբար ծրագրի իրականացման ժամանակաընթացքն ամենահարմարը կլինի կրթության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի, տարբերակված մոտեցման և այլ բացասական դրսևորումների առկայությունն (բացակայությունը) ու բնույթը պարզելուն զուգընթաց պարզել նաև համայնքային իշխանության փոփոխության ազդեցությունը՝ նշված կրթական հաստատությունների նկատմամբ: Այսպես, նշենք մի քանի առերևույթ տարածված խնդիր.

1. ՆՈւՀ ընդունելու նպատակով երեխաների հերթագրումը հաճախ իրականացվում է ոչ արդարացի ու ձևական կողմն ապահովելու նպատակով, չի ապահովվում թափանցիկությունը, խմբերը ձևավորվում են հաշվի չառնելով հերթագրումը (*օրինակ՝ հերթագրմամբ 100-րդի համար տեղ չի լինում, մինչդեռ 151-րդն ընդունվում է ՆՈւՀ*): Ընդ որում, նույն անորոշ վիճակն է, երբ խոսքը վերաբերում է ՆՈւՀ-երում «դրամահավաքության», գնումների, մատակարարման, կրթական չափորոշիչներով առաջնորդվելուն և այլ գործընթացներին, իսկ երեխաների խնամքն ու դաստիարակությունը հոգալու և կրթելու հարցում դաստիարակների ու դայակների ընտրությունն ու աշխատանքի ընդունելը հաճախ կրում է համայնքային իշխանության փոփոխության ազդեցությունը:
2. Արտադպրոցական կրթության կազմակերպումը մասամբ անվճար, մասամբ՝ վճարովի է, սակայն այստեղ ևս առերևույթ առկա են տարբերակված մոտեցումներ ու կոռուպցիոն ռիսկեր: Առավել արտահայտված են աշխատակազմերի (կադրերի) ու տնօրինության ընտրության (նշանակման) և աշխատանքից ազատման, ինչպես նաև վարձավճարների սահմանման, «դրամահավաքության», գնումների կազմակերպման, մատակարարման գործընթացներում առերևույթ դրսևորվող կոռուպցիոն ռիսկերն ու խտրականությունը: Սակայն, բացի այդ, անվճար խմբակների նյութատեխնիկական բազայի համալրման և պայմանների բարելավման ուղղությամբ ձեռնարկված միջոցները հարյուր և ավելի անգամ զիջում են այն խմբակների համար ձեռնարկվող միջոցներին, որոնք վճարովի հիմունքներով են՝ առանց հաշվի առնվելու խմբակների սաների թվակազմը, հաճախել ցանկացողների պահանջներն ու խմբակների զարգացման անհրաժեշտությունն ու հեռանկարը:

Ծրագրի նպատակը--Ծրագիրը կոչված է նվազեցնելու կրթության ոլորտի կոռուպցիոն ռիսկերը, նպաստելու՝ կրթության մատչելիության ապահովմանը և հնարավորինս բացառելու՝ տարբերակված մոտեցումը երեխաների, ծնողների և կրթության ոլորտի կադրերի ընտրության հարցում: Մշտադիտարկումը և իրազեկումը, առաջարկությունները և պատկան մարմինների միջամտությունը կանխարգելող ազդեցություն կունենան նաև:

Առաջարկվող գործողությունները.

1. Ձևավորել մոնիթորինգային հարցազրուցավարների երեք հոգանոց խումբ և վերջինիս անդամների համար հարցումների վերլուծաբանի (այսուհետ նաև՝ փորձագետներ) մասնակցությամբ կազմակերպել վերապատրաստման եռօրյա դասընթաց՝ հարցումներն արդյունավետ իրականացնելու նպատակով: Բնակչությանը բաժանելու նպատակով պատրաստել 1000 հատ տեղեկատվական թերթոն (թերթիկ):
2. Փորձագետների օգնությամբ տեղեկատվություն ստանալու և հարցումներ իրականացնելու նպատակով կազմել 23 գրություն ու երեք տարբեր հարցադրումներով 230 հարցաթերթ՝ հիմքում ՆՈւՀ-եր, ԱԿՀ-ներ, քաղաքապետարան և բնակչություն բաժանումը:
3. Հարցումների և տրամադրված տեղեկատվության համադրմամբ վերլուծությամբ պարզել ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի, խտրական վերաբերմունքի, կրթության մատչելիությանն ու գործելակերպի թափանցիկությանը խոչընդոտող խնդիրներին (հանգամանքների) իրական ծավալներն ու պատկերը, պատճառներն ու զարգացումները, վերհանել ու ըստ ազդեցության, տարածվածության և քանակի՝ դասակարգել դրանք:

4. Կազմել ամփոփ հաշվետվություն (զեկույց՝ 50 օրինակից), հանրային քննարկման ձևաչափով ներկայացնել ծրագրի արդյունքները և պատրաստել առաջարկությունների փաթեթ՝ պատկան մարմիններ ներկայացնելու նպատակով՝ ապահովելով ծրագրի լուսաբանումը ՋԼՄ-ներով:

Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները.

1. Ծրագրի ուղղակի շահառուներն են տարածաշրջանի բնակչությունը, այդ թվում՝ Կապանում գործող ՆՈւՀ-եր (թիվ 1,2,4,5,6,7,8,9,10,11,12,13, ընդհանուր՝ 12) և ԱԿՀ-ներ («Կապանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն», «Դավիթ Համբարձումյանի անվան Կապանի մանկապատանեկան մարզադպրոց», «Կապանի Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց», «Կապանի թիվ 2 երաժշտական դպրոց», «Կապանի թիվ 3 երաժշտական դպրոց», «Կապանի արվեստի մանկական դպրոց», «Կապանի գեղարվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ-ները, «Կապանի քաղաքապետարանի մշակույթի կենտրոն», «Կապանի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց», «Կապանի մարմնամարզության մարզադպրոց» ՀԲՀ-ներ, ընդհանուր՝ 10) հաճախող և ինչ-ինչ պատճառներով այդօրինակ կրթությունից (ընդունելությունից, հաճախումից) դուրս մնացած երեխաները (սաներ, աշակերտներ և այլք), նրանց ընտանիքները, նշված հաստատությունների աշխատողները (այդ թվում՝ տնօրեններ, մանկավարժներ, դաստիարակներ, խմբակավարներ և այլք), ինչպես նաև Կապանի քաղաքապետարանի (կրթության, մշակույթի և սպորտի բաժին) համապատասխան բաժնի աշխատակազմը:
2. Ծրագրի անուղղակի շահառուներ են մեր և գործընկեր կազմակերպությունների facebook-յան հարթակի (պրոֆիլներ, խմբեր կայքեր) լսարանն ամբողջացնող օգտատերերը (խմբակիցներ, հետևորդներ, ընկերներ և այլք), ՋԼՄ-ները («Խուստուփի թիվի» և «Սոսի» հեռուստատեսությունները, «Սյունիք օնլայն», և այլ լրատվական կայքերը, «Սյունյաց երկիր» և այլ թերթերը) և այլք:

Կիրառվող մեթոդաբանությունը—կարիքների գնահատման որակական և քանակական մեթոդներ, մոնիթորինգ (ուսումնասիրություն-հետազոտություն, հարցումներ, վերլուծություններ, այդ թվում՝ SPSS ծրագրով), դեդուկցիա (մասնավորից դեպի ընդհանուրը եզրահանգումների բխեցում, ընդհանրացում):

Ակնկալվող արդյունքները և ազդեցությունը.

1. Մոնիթորինգը ներառել է ոչ միայն կրթության (իհարկե՝ մասամբ) ոլորտը, այլ նաև ՏԻՄ-ի գործելակերպը (իհարկե՝ մասամբ): Արդյունքում՝ հնարավորինս բացահայտվել, պարզվել ու հստակեցվել են թիրախային կրթական հաստատություններում, ՏԻՄ-ում ու ոլորտում առկա առերևույթ կոռուպցիոն ռիսկերը, խտրականության դրսևորումներն ու դիտարկվող կազմակերպությունների և պատասխանատուների (անհատների) գործելակերպի թափանցիկությունը, հաշվետվողականությունը, համագործակցելու պատրաստակամությունը:
2. Ծրագիրը տարածվել է ծրագրային թիմի, թիրախային 22 կրթական հաստատության, քաղաքապետարանի (230 հարցվածների՝ ըստ հարցաթերթիկների, 1000 տեղեկատվական թերթոն ստացած քաղաքացու նկատմամբ), իսկ ընդհանրապես՝ Կապանի և հարակից բնակավայրերի բնակչության զգալի մասի և համացանցի օգտատերերի նկատմամբ:
3. Ամբողջացվել են կրթության ոլորտի թիրախային նշանակության առկա հիմնախնդիրները, կազմվել են գրքույկներ, զեկույց և առաջարկությունների փաթեթ՝ պատկան մարմիններ ներկայացնելու նպատակով՝ ապահովելով ծրագրի լուսաբանումը (նաև՝ հաղորդումով):
4. Ծրագիրը ռազմավարական մեծ նշանակություն կունենա հաշվի առնելով, որ ներառում է ոչ միայն կրթության ոլորտը, այլև՝ ՏԻՄ-ի գործելակերպը և, միաժամանակ, նախադրյալ կլինի նմանատիպ ամբողջական, սակայն երկարաժամկետ ու ավելի լայնամասշտաբ ծրագրերի

իրականացման համար՝ հաշվի առնելով, որ կրթական այլ հաստատություններին վերաբերող խնդիրներին սույն ծրագիրը չի անդրադառնում:

Ժամանակացույց

Շաբաթ	Գործողություն
1-ին	Նախապատրաստական փուլ: Ծրագրային թիմի և աջակցող անձանց հետ պայմանագրերի/համաձայնագրերի կնքում: Անհրաժեշտ նյութերի ձեռք բերում: Փորձագետների կողմից գրությունների և հարցաթերթերի կազմում: Տեղեկատվական թերթոնների (թերթիկների) պատրաստում:
2-րդ	Վերապատրաստման եռօրյա դասընթացի կազմակերպում հարցումներ իրականացնողների համար: Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածում հնարավոր միջոցներով (<i>համացանց, տեղեկատվական թերթոններ և այլ</i>): Գրությունների ու կից փաստաթղթերի հղում (<i>փոստային ծառայության միջոցով ուղարկում, ընդհանուր 23 գրություն</i>):
3-րդ, 4-րդ	Հարցումների իրականացում և միաժամանակ ծրագրի վերաբերյալ իրազեկում. ամեն մի հաստատությունում/կազմակերպությունում (<i>այդ թվում՝ քաղաքապետարան</i>) կլրացվի 7 հարցաթերթիկ (<i>161 հարցաթերթ՝ երեխաներ, ծնողներ, աշխատողներ-- ՆՈւՀ-երի դեպքում՝ ծնողներից և աշխատողներից, քաղաքապետարանի դեպքում՝ աշխատողներից</i>), իսկ 69 հարցաթերթ կլրացվի բնակչության շրջանում, ընդհանուր 230 հարցաթերթիկ:
5-րդ	Լրացված հարցաթերթիկների վերլուծություն (<i>SPSS ծրագրով</i>): Միջանկյալ հաշվետվություն:
6-րդ	Հանրային քննարկման ձևաչափով ծրագրի արդյունքների ներկայացում՝ ապահովելով տեղական ԶԼՄ-ների միջոցով արդյունքների լուսաբանումը:
7-րդ	Ի պատասխան գրությունների (հարցման)՝ տրված պատասխանների ու տրամադրված տեղեկատվության վերլուծություն (<i>գրությանը չպատասխանելը ևս կդիտարկվի</i>):
8-րդ	Զեկույցի (<i>գունավոր, 50 օրինակ, բաժանելու նպատակով</i>) և առաջարկությունների փաթեթի կազմում: Հաշվետվության պատրաստում:

Բյուջե / Հավելված Budget (*կից նաև՝ excel ֆայլով*)

Հ/Հ	Միավոր	Միավոր	Միավորի գին	ԻՀԱ-ից պահանջվող գումար	Ներդրվող գումար	Ընդհանուր
1	2	3	4	5	6	7
1.	Աշխատակազմ (ծրագրային թիմ, աշխատավարձ և փորձագետների հոնորարներ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերն ու պարտադիր վճարումները)		ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ՀՀ դրամ/գույք	ՀՀ դրամ
1.1	Ծրագրի ղեկավար/դասընթացավար/իրավաբան Հրայր Խաչատրյան (ծրագրի կոորդինացում,	2 ամիս	100 000	200 000	-----	200 000

	դասընթացի համավարում, գրությունների և ծրագրային թիմի անդամների հետ կնքվող պայմանագրերի ձևակերպում, ծրագրի իրավական մասի ապահովում, վերահսկում, պատասխանատու)					
1.2	Ծրագրի հաշվապահ Ռուզան Մկրտումյան (ստացված միջոցների, գնումների և ծախսերի վերահսկում, ամբողջական ֆինանսական հաշվետվություն)	1 ամիս	30 000	30 000	-----	30 000
1.3	Հարցումների վերլուծաբան/ դասընթացավար Գոհար Աթայան (դասընթացի համավարում, հարցաթերթերի, զեկույցի, գրքույկների կազմմանը, վերլուծության և արդյունքների ամփոփմանը մասնակցություն)	1 ամիս	50 000	50 000	-----	50 000
1.4	Երեք հարցազրուցավար (հարցումների իրականացում) 1.Սոնա Բաղդասարյան 2.Մուշեղ Վարդանյան 3.Վաչե Բաղդասարյան	1 ամիս	30 000	90 000	-----	90 000
---	Ընդհամենը	-----	-----	370 000	-----	370 000
2	Տրանսպորտային ծառայությունների վճար, գիշերակաց, օրապահիկ					
2.1	Կապան-Երևան-Կապան (պայմանագրի կնքման և վերջնական հաշվետվության ու զեկույցի ներկայացման)	2 անգամ՝ 1 անձի համար	12 000	24 000	-----	24 000
2.2	Կապանում հարցումների կազմակերպում (քաղաքի ծայրամասերը՝ տաքսի ծառայության միջոցով)	23 կառույց	տաքսին՝ 1 կմ-ն՝ 100 ՀՀ դրամ,	15 000	-----	15 000
---	Ընդհամենը	-----	-----	39 000	-----	39 000
3.	Գրասենյակային պարագաներ					
3.1	Թուղթ A 4 (հարցաթերթեր,	10 տուփ	2 500	25 000	-----	25 000

	տեղեկատվական թերթոններ, գրություններ, առաջարկությունների փաթեթ և այլ փաստաթղթաշրջանառություն)					
---	Ընդհամենը	-----	-----	25 000	-----	25 000
4.	Հրապարակում/ հրատարակում					
4.1	Ձեկույց (գունավոր, բաժանելու նպատակով)	30 հատ	1 000	30 000	-----	30 000
4.2	Տպիչի քարտիչի լիցքավորում	3 անգամ	5 000	15 000	-----	15 000
---	Ընդհամենը	-----	-----	45 000	-----	45 000
5	Այլ ուղղակի ծախսեր					
5.1	Սուրճի ընդմիջում (դասընթացների, ընթացիկ աշխատանքային հանդիպումների համար)	3 անգամ՝ ըստ դասընթացի օրերի	5 000	15 000	-----	15 000
5.2	Ծրագրի արդյունքների ներկայացման (հանրային քննարկման ձևաչափով) ժամանակ ջրեղեն	1 անգամ	5 000	5 000	-----	5 000
5.3	Գրությունները կից փաստաթղթերով ուղարկելու համար փոստային առաքման վճար (հետադարձ ծանուցումով)	23 կառույց	380	8740	-----	8740
5.4	Երևանում՝ գիշերակաց և օրապահիկ	2 անգամ՝ 1 անձի համար	20 000	40 000	-----	40 000
---	Ընդհամենը	-----	-----	68 740	-----	68 740
---	Ընդհանուր՝ 1-5-րդ կետերը	-----	-----	547 740	-----	547 740

Այսպիսով, ԻՀԱ-ի հայցվող գումարի չափը կազմում է՝ 547 740 (հինգ հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ, իսկ ՕՀԻԳ-ի ներդրումը կլինի գրասենյակի, հանրային քննարկման ձևաչափով ծրագրի արդյունքների ներկայացման համար դահլիճի, էլ.տեխնիկայի (համակարգիչ, տպիչ), կոմունալ ծախսերի (ջուր, էլ.էներգիա, հեռախոս), ինտերնետ կապի, գրենականի տեսքով:

Այլ տեղեկատվություններ--սույն ծրագիրը ֆինանսավորման նպատակով որևէ կազմակերպություն չի ներկայացվել:

Դրամաշնորհային հայտին կից ներկայացվելիք փաստաթղթերի ցանկ.

1. ՕՀԻԳ-ի կանոնադրության լուսապատճենը,
 2. ՕՀԻԳ-ի պետական գրանցման վկայականի լուսապատճենը (ներառյալ ներդիրի),
 3. ԻՀԱ-ի կողմից կազմակերպված հակակոռուպցիոն ուսուցումներին ՕՀԻԳ-ի նախագահի (ծրագրի ղեկավարի) մասնակցության վկայականի լուսապատճենը,
 4. ՕՀԻԳ-ի բանկային հաշվեհամարի պայմանագրի, տեղեկություն ներառող տեղեկանքի և հաշվեհամարի շարժի վերաբերյալ քաղվածքի (հաստատված բանկի կողմից) լուսապատճենները,
 5. Ծրագրի հիմնական աշխատակազմի ինքնակենսագրականները և անձնագրերի լուսապատճենները:
- Ծանուցում: ՕՀԻԳ-ի ՀՎՀՀ-ն նշված է պետոեգիստրի վկայականում և առկա է կնիքի վրա:

Հրայր Հունանի Խաչատրյան
Կ.Տ. «Օրենքը՝ հանուն իրավունքի գերակայության»
հասարակական կազմակերպության նախագահ